12004

1953
1628-42

55 98 195

# ՔՐԻՍՏՈՆԷԱ ԿԱՆ
# ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ռամկական ոճիւ շարադրեալ
'ի պէտս նորավարժից.

Վերստին տպեալ փոքրադիր:

'ի Մեծափառ Պարոնութե
ն Յարապետին որդի [illegible]
կոստանդնուպօլսեցւոյ.

'ի Տպարանի մայր եկեղեցւոյս ՍԲ
Ածածնի.
'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ.
1823. ՌՄՀԲ.

96235



Խաչեալ ա՛ծ տ՛ր իմ յ՛ս,
խաւար մտաց իմոց
տո՛ւր լոյս ։

## Հարց ։ Դու ո՞վ ես ։

Աստուծոյ շնորհօքն քրիստոնեայ եմ ։

Ո՞րով երեւիս քրիստոնեայ ։

Սբ̃ աւազանին ծննդեամբն, ուր մկրտեալ եմ՝ յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սբ̃յ ։

Կատարեալ քրիստոնէութեան ո՞րն է ։

Կատարեալ քրիստոնեային այն է, որ քնի հրամանը կըկատարէ, նաև եկեղեցւոյ պատուիրանքը կըպահէ ։

Քրիստոնէին նշանը ի՞նչ է ։

Քը

Քրիստոնէին նշանը , մէյմը՝
երեսը խաչակնքելն է . և մէյ
մընալ՝ իւր ընկերը սիրելն է ։

Ո՞նչպէս պէտք է խաչակնքել ։

Այսպէս ըսելով . յանուն Հօր՝
և որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ ։

Քանի՞ բան պէտք է քրիստո-
նէին , որ գիտնայ՝ հոգւոյ փրկու-
թեան համար ։

Չորս բան . հաւատք , յոյս ,
սէր , և բարի գործ ։

Քանի՞ հարկաւոր բան կայ քրիս-
տոնէին՝ որ անոնց պէտք հաւատայ ։

Երկու . մէկը՝ սուրբ երրորդութեան
խորհուրդը , թէ աստուած մէկ է ,
և

և երեք անձն ունի․ Հայր և որդի և սբ. Հոգի ։ Իսկ մեկալ՝ մարդեղութեն խորհուրդը՝ թէ որդին ած յաշխարհ եկաւ, մարմին առաւ, մեզ նըման մարդ եղաւ․ և իրեն չարչարանքովը և մեռնելովը մեզի սատանային ձեռքէն ազատեց ։

Ո՞ր բանի պիտի յուսանք ։

Այս երկու բանին․ մէկը՝ թէ քանի կենդանի ենք, ած իւր շնորքը մեզի կու տայ․ և մէկալը՝ թէ երբ որ մեռանինք, ած իւր արքայութեն փառքը մեզի կու տայ։

Ո՞չ գիտէ ուրեմն ։

Ս՝իրելը ա՜ծ, և սիրելը մեր ըն-կերը ։

Ի՞նչ բարեգործութե գիտէ գոր-ծեմք ։

Պ. այ հրամանը կատարելմք · որ եկեղեցւոյ պատուիրանքը տե-ղը տանիմք · աղօթք ընելմք · պաք պահելմք · և ողորմութի տամք ։

Ա՛ծ ի՞նչ է ։

Պ. Ամէն ստեղծուածներուն ստեղծօղն է · ինքն հիչ մէկ-էմը ստեղծուած չէ · երեք անձն և մի բնութի է · ամե-նաբարի է · ամենազօր է · ա-

մե

ջենաւոր է. ոչ սկիզբն ունի, և ոչ վերջ ունի. յաւիտենա-կան և անփոփոխելի է։

Նա ո՞ւր է։

Նա ամէն տեղ է։

Հապա ի՞նչու երկինքն է կըսեմք։

Երկինքը՝ ամէնէն բարձր և պատուաւոր տեղն է. Հրեշ-տակները և մեր հոգիքը հոն են. և արքայութիւնը ա̅ծ այն տեղը սահմաներ է. անոր համար ա̅ծ յերկինս է կըսեմք. զէրէ ա̅ծ ամէն տեղ է։

Հայր ա̅ծ՞ է։

Այո՛ ա̅ծ է։

Որդին ա՞ծ է։

Այո՛ ած է։

Հոգին սբ ա՞ծ է։

Այո՛ ած է։

Ասանկ է նէ, երեք ած կը լինին։

Չէ՛ն ըլլար երեք ած, այլ մի ած է․ զէրէ երեք անձինքն մէկ ըզ մէկէ բաժանուած չէն․ այլ մէկ բնութի, եւ մէկ ածութեան ունին։

Ասո՞ր մէկ օրինակ մը տալ էնք որ խելքս հասնի։

Քեզի օրինակ ըլլայ արեւն․ առաջ նախ ինքն արեգակն․ երկրորդ՝ լոյսն․ երրորդ՝ տաքու-

քու

քուծին. որ այս երեքս մի են.
զերէ բաժանեալ չեն ։

Նաև, ակին ջուրն, ակէն վա-
զած գետին ջուրն, և աւա-
զանի մէջ լցուած ջուրն. ու-
րիշ ուրիշ են, սակայն մէկ ըզ
մէկէ բաժանված չեն. ե-
րեքն մէկ ջուր են ։

Կրնա՞ս ուրիշ պարզ օրինակ մը ալ
տալ ինծի, որ աղէկ մը տեղեկանամ։

Ա. Հա՛ տամ քեզ՝ մէկ հեշտ
հասկընալու, և յայտնի օրի-
նակ մի։ Նայէ այս գիրը (ա),
որ երեք ծիւղ կամ ոտուն ու-
նի. ամմէն մէկ ոտուն՝ կատա-
րեալ

րեալ այր է. մէկ ըզ մէկէ ա-
ւելի եւ պակաս զօրութիւն չու-
նին. եւ երեք սիւնքն մէկ տեղ
գալով՝ մէկ այր կըսուլի, եւ ոչ
երեք այր ։ Նոյնպէս Հայր
ա̃ծ, որդին ա̃ծ, հոգին ս̃բ
ա̃ծ, երեք անձինք են, այլ
երեք ա̃ծ չեն. մէկ ա̃ծ է.
մէկ զօրութիւն եւ արարչութիւն
ունին ։

Ինչո՞ւ կը խաչակնքենք ընենք։
Մէյմը այս է, թէ որովհետեւ
ս̃բ խաչն՝ ք̃ի նշանն է. ք̃ի
նշանը մեր վերայ ունենալով
յայտնի կը լինինք թէ քրիս

տոս

տանեալ ենք՝ և քո՛յն ծառայ.
և մեկալը՝ որ խաչակնքած ժա
մանակնիս՝ սբ՟ երրորդութե՟
անունը կը յիշեմք. և տալ
սբ՟ երրորդութե՟ հաւատալ-
նիս, և երկրպագութի՟ ընել-
նիս կիմացվի.

## Գլ. Բ.

Հաւատոյ հանգանակը գիտե՞ս.
Այո՛ գիտեմ. Հաւատամք ՚ի
մի ած՟ ՚ի հայրն ամենակալ. և այլն։
Այս հանգանակը քանի՞ մասունք
կամ տարբերեան ունի, և ո՞չ ըստա։
Տասն երկու տարրիձան ունի,
և սբ՟ առաքեալներըն՝ յեղէմ

քա

քաղաքը՝ 'ի մէջ սիոն վերնա-
տունը սահմանեցին։

Ո՞րն է առաջին աստիճանն, և
այն ո՞ր առաքելոյ բանն։

Առաջին աստիճանն է այս. Հաւատամք 'ի մի Ած՝ 'ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի։ Ան զայս՝ պետրոս առաքեալը ըսաւ։

Մեկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ՝ թէ մէկ է Ած. և այս մէկ Ածութե առաջին անձն հայր ամենակարողն է, որ երկինքը և երկիրս, և ամ ինչ որ կայ նէ, իւր

իւր ամենակարողութ՟բն յոչնչէ
ստեղծեց ։

Ո՞րն է երկրորդ աստիճանն , և
ո՞ր առաքելու բանն ։

Երկրորդ աստիճանն է այս․
Եւ ՚ի Տր̄ Յս̄ Քս̄՝ որդին Այ̄ ։
Եւ այս բանս յովհաննէս աւ-
ետարանիչն ։

Մեկնէ որ իմանամ ։

Այս կը հաւատամ՝ թէ յս̄ քս̄
հօր այ̄ որդին է . և ինչպս̄՝ հայր
ա̄ծ ամենակալ է , երկնի և
երկրի ստեղծօղ է . յս̄ քս̄ ալ՝
հօր այ̄ պէս ամենակալ է , երկ
նի և երկրի արարիչ է ։

Որ

Ո՞րն է երրորդ յօդուածն, և ո՞վ ըսաւ:

Երրորդ յօդուածն է այս.
Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սբյ կուսէն Հոգւովն սբվ: Այս ըսաւ յովհաննէս աւետարանիչին եղբայրն՝ յակոբոս առաքեալն:

Մեկնէ որ իմանամ:

Ես կը հաւատամ՝ թէ յս քս ճշմարիտ ածը՝ մեզի փրկելու համար աշխարհք եկաւ. Հոգւոյն սբյ զօրութբը՝ սբ կոյս Մարիամ ածածնէն ծնաւ.

մեզ

մեղքէն 'ի զաւս մարդկային բոլոր բնութիւն առաւ. հոգւով մտօք՝ մարմնով՝ ճշմարիտ և կատարեալ մարդ եղաւ. ոչ ա̃ծութիւն 'ի մարմին փոխել-ցաւ, և ոչ մարմինն յա̃ծու փոխարկեցաւ:

Ո՞րն է չորրորդ տարաձայնն, և ո՞ր բանս:

Չորրորդ տարաձայնն է այս.
Չարչարեալ, խաչեալ, թաղեալ.
Եւ այս բանս անդրէտս ա-ռաքելոյն:

Մեկնէ որ իմանամ:

Եւ կը հաւատամ՝ թէ յս̃ քս̃
մե

մեզի այնքան սիրեց, որ դը
ժոխքին տանջանքէն՝ և սատանայի
ձեռքէն մեզի ազատելու հա
մար, հրեից ազգէն չարչարվե
ցաւ՝ պոնտացի պիղատոս դա
տաւորին իշխանութե՛ ժամա
նակը. և նր̃ խաչափայտին վր̃
մեռաւ։ Այս ժամանակը քի
հոգին ու մարմինը մէկ ըզ
մէկէ բաժանվեցան. լաքին
քի՛ն աստուածը ոչ հոգիէն բա
ժանվեցաւ, և ոչ մարմինէն։
Օրէնք է [illegible] որ [illegible] հաւնի։
Քեզ օրինակ ըլլայ աղեղը.
այսինքն՝ օխին եայը. թէ աստ

Թելին մէջ տեղէն կըտրես, այն Թելն՝ մէկ ըզ մէկէ կը բաժնըվի, լաքին աղեղը երկու կտոր Թելէն ալ չի բաժանվիր։ Ինչ՛ Թելը կը նշանակէ ք͞ի մարմինը և հոգին, որ մահուան ժամանակը բաժանվեցան․ աղեղը կը նշանակէ ք͞նի ա͞ծութինը, որ ոչ հոգիէն բաժնըվեցաւ, և ոչ մարմինէն։

Ո՞րն է հի՛նգերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Հինգերորդ աստիճանն է այս։ Իջ՛ի դժ-խոս։ Նա այս ըսաւ



1955
9623-57

Թովմա առաքելոյն։

Մեկնէ որ իմանայ։

Նա կը հաւատամ, թէ յս քս
երբոր խաչին վերայ մեռաւ,
մարմնոյը նորափոր գերեզմա
նի մէջ թաղվեցաւ, և հոգւոյը
դժոխքը իջաւ. դժոխքը քա
կեց. և այն զընդանին մէջը
եղել որ նահապետներուն, և
մարգարէներուն, և արդար֊
ներուն հոգիքը ազատեց։ Ու
ստի անոնք որ ադամայ սկզբ֊
նական մեղացը համար այն
բանտին մէջը արգելված էին՝
քանի չարչարանքովը և մահ֊
ուամ

ուամբը փրկեցան, և եր-
կինքը եղան ։

Ո՞րն է վեցերորդ աստիճանն, եւ
ո՞վ ըսաւ ։

Վեցերորդ աստիճանն է այս։
Յերրորդ տասոր յորդորացեալ ’ի
Գաղատացւոց ։ Նաւ այս ըսաւ Բար
թուղիմէոս առաքեալն ։

Մէկնէ որ իմանամ։

Նա կը հաստատէ, թէ յ՟ս ք՟ս
երեք օրէն յետոյ՝ շաբաթ գի
շերը որ կիրակի կը լուսա-
նայր՝ իւր ա՟ծային զօրութ՟ն
յարութ՟ի առաւ անապական
մարմնով ։

Ո՞ր

Ո՞րն է եօթներորդ աստիճանն, և
ո՞վ ըսաւ ։

Եօթներորդ աստիճանն է այս. Համբարձաւ յերկինս և նստաւ ը̄ աջմէ Հօր։ Զայս ըսաւ Փիլիպպոս առաքեալն ։

Մ՝եկնէ որ իմանամ.

Ես կը հաւատամ, թէ յս̄ քս̄ յետ քառասուն աւուր յարութենէն՝ իւր ա̄ծային կարողութ̄ն երկինքը համբարձաւ. և Հօր ա̄յ աջ կողմը նստաւ, որոյ հետն հաւասար է փառօք և իշխանութ̄բ. և իւր հաւատացելոցը միշտ օգնութ̄ն կընէ։

Որ

Ո՞րն է ութերորդ աստիճանն,
և ո՞վ ըսաւ ։

Ութերորդ աստիճանն է այս. Կարողոյ է դառնել շինեցանիս և շնաեալոյ։ Նա այս ըսաւ Մատթէոս աւետարանիչն ։

Ո՞նչ է որ խմանալ

Նա կը հաւատամ, թէ յն քն աշխարքիս վերջը դատաստան պիտի գայ անթիւ հրեշտակներով. արդարները յաջ կողմը պիտի կանգնեցընէ, և մեղաւորները ձախ կողմը։ Արդարները արքայութի կը տանի, որ յաւիտենական փառք ու պատիւը

տի՛ւր հոգւով մարմնով վայե-
լեն, և մեղաւորները և անհա
ւատները դժոխքը կուղար-
կէ, որ յաւիտենական պա-
տիժ և տանջանք կրեն։

Ո՞րն է հինգերորդ խորհուրդն, և
ո՞վ ըսաւ։

Հինգերորդ խորհուրդն է այս․
Հաստատումն ՚ի հոգին սբ։ Նա
այս ըսաւ յակոբոս առաքեալն։

Ի՞նչ է որ հիմնամ։

Նա կը հաստատէ ՚ի հոգին
սբ․ որ հօր և որդւոյ էակից
և համագոյ է․ Նա ինչպէս հայր
և որդին անեղ և կատարեալ

են

են, նոյնպէս և հոգին սբ ած անեղ և կատարեալ է․ և մեք քանի որ յայս աշխարհս եմք, իւր շնորքը մեզի կու տայ որ փրկութեն հասնիմք։

Ո՞րն է տասներորդ տարեճանն, ու ո՞վ ըսաւ։

Տասներորդ աստիճանն է այս․ ՚Ի մէջ խոստովանէինք եկեղեցի։ Նու այս ըսաւ սխման կանանացին։

Մեկն է որ խմանամ։

Նա կը հաւատամ ՚ի մեր կաթողիկէ եկեղեցին։ Լուքին իմացիր, որ կաթողիկէ եկեղեցին՝ չէ այս քարաշէն և

փայտաշէն եկեղեցին, որ կոչ
վի Նիւ-Յորքեան եկեղեցի. այլ սա
քրիստոնէից ժողովն է, որ
կոչի ընդհանուր եկեղեցի։ Որ
ամենեքեան 'ի միաւորին մէկ մար_
մին են միոյ գլխոյ. և այն որ
լուխն է տէրն մեր յս̃ քս̃. և
մէկ հաւատք, մէկ մկրտութի̃,
և մէկ սրբարար շնորք ունին
ամենեքն. և միմեանց հետ հա_
ղորդութի̃ կրնեն աղօթքով և
բարի գործով։ Սուրբ կա_
ղօթեմք յարևագալի ժամն̃
առելով. [illegible]
[illegible]

նէ

նչութէ, ուր և հորդան շնոււն
տն արբուէ. ոց աղօթիւք նց և
բարեխօսութեն մզ ողորմեսցի ։
Նաև այս ուղղափառ եկեղե-
ցին ունի այս չորս արտաքին
նշանս, այսինքն, մի՝ սուրբ՝ կաթուղիկէ
և առաքելական։ Ինչպէս կը
քարոզէ եկեղեցին. դաւանես-
ցուք ըստ հանգանակին ած ՚ի մի միայն՝
սուրբ՝ կաթողիկէ՝ և առաքելա-
կան եկեղեցւոյ ։

Որն է տուն և ծնօղ ապա
ծննդ, և ով է։

Տան և մեկերորդ աստուածային
է այս. ՚ի թագւոր ծնողը։ և
այս

այս ըսաւ Թադէոս առաքելոյն։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ՝ թէ այս մր եկեղեցւոյ մէջ՝ մեղաց թողուին կըլլայ. զերբ ով որ իւր մեղքը զղջայ, խոստովանի, և ապաշխարէ, և քհնի մը մարմնոյ և արեանն հաղորդի, հարկաւ թողուին կը գտնայ։ Այս այս իշխանութիւնը ած տուաւ քահանայից, որ զղջացող մեղաւորին արձակում և թողութին տան։

Ո՞րն է տասն երկրորդ տարբ, ծոնն, և ո՞վ ըսաւ։

Տասն երկու երորդ աստիճանն
է այս. 'ի յորում ճանաչեն 'ի գո
րծառնութեանն յանէութենէց ։ Եւ այս
ըստ մատաւթիա առաքեալն։

Մեկնէ որ խօսնա։

Նա կը հաւատամ, թէ դա-
տաստանին օրն՝ մեռեալներն
իւրեանց մարմնովն յարութի
կառնեն. բարի քրիստոնեայնե-
րը յարքայութիւն կերթան, և ան
հաւատները և չար քրիստո-
նեայները դժոխքը։

---

Գլ. Գ.։

Ո՞վ ստեղծ զքեզ, և ինչու համար։
Աստուած ստեղծ զիս. որքա
նի

նի կենդանի եմ, այ ծառայ_
ութի ընեմ, այ պաշտօն մատու_
ցանեմ, և երբ որ մեռանիմ,
արքայութե փառացը հասնիմ։

Ինչ՞ կերպով այ ծառայութ ընել։

Այս երկու բանովս կըլլայ. մէյմը՝ որ այ վախը և երկիւղը սրտերնուս մէջը միշտ կունենանք։ և մէկալ՝ այ պատուիրանքը սիրով և զգուշութ կը պահեմք։

Ինչ՞ կերպով այ պաշտօն ընել։

Այս երեք բանովս կըլլայ. նախ՝ ներքին մտօք և հոգւով այ մեծութը կը հաւատամք։

Երկ

Երկրորդ՝ արտաքին կերպով՝ աչքին և դողումն՝ այն ծունր կը դընեմք, երկրպագութիւն կընեմք։ Երրորդ՝ մեր պատարագ կը ունենամք, այն աղօթք և աղաչանք կը մատուցանեմք։

**Աղօթքն ի՞նչ է։**

Աղօթքն է, որ միտքդ առ Աստուած կը վերցունես, քեզի բրած բարերարութեան համար շնորհակալ կըլլաս, և արժանաւոր բան մը կը խնդրես։ Նաև այս երկու կերպ է. մէկն միայն սրտիւ և մտօք, և կըսուի մտաւոր աղօթք։ Նաև մէկը՝ բե

բանով և ձայնիւ , և կըսուի
ձայնաւոր աղօթք։

Ինչո՞ւ համար աղօթքնիս երբեմն
ընդունելի չէ ըլլար։

Երեք պատճառ ունի․ մէկն
այն է , որ հաստատուն հաւա
տով և յուսով չեմք խնդրեր,
այլ երկմտութե̄ և թերահաւ
ատութե̄ , յ̄ր՝ [illegible]։ Երկ
րորդ՝ անպէտ և անարժան
բան կը խնդրեմք․ ինչպէս գե
ղեցիկ տուն , չափէն աւելի
ստակ և ապրանք , և այլն։ Ուս
տի կըսէ յակոբոս առաքեալն․
Խնդրէք և ոչ առնուք , զ̃ի չէ չա

րա

[illegible] · [illegible] ։ Հինգերորդ՝ մեր
խստասրտութեան համար է · ըսել է
մենք երբ որ անգութ և քա
րասիրտ կըլլանք, մեզի աղա-
չողին ձայնին չեմք լսեր, ած
մեր ձայնը ի՞նչպէս պիտի լսէ ։
Ուստի եթէ մենք անյիշաչար
ըլլանք, մեր ընկերին յան-
ցանքը ներենք, ած ալ մեր յան
ցանքը կը ներէ · այս է որ կը
սենք տէրունական աղօթքին
մէջը · Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպ
և մք թողումք մերոց պարտապանաց ։
Ասա՛ տէրունական աղօթքն որ ուսեմ ։
Հա՛յր մեր որ յերկինս, սուրբ ե-
ղի

ղեցի անուն քո․ եկեսցէ ար
քայութի քո․ եղիցին կամք քո
որպ յերկինս և յերկրի․ զհաց
մեր հանապազորդ՝ տուր մեզ
այսօր․ և թող մեզ զպարտիս
մեր՝ որպ և մեք թողումք մե-
րոց պարտապանաց․ և մի տա-
նիր զմեզ ՚ի փորձութի․ այլ
փրկեա զմեզ ՚ի չարէ․ զի քո
է արքայութի և զօրութի և
փառք յաւիտեանս․ ամէն։

Ինչո՞ – տէրունական աղօթք կոչի։

Զի Տէրն քս տր ուսոյց
մեզ՝ այս աղօթքս․ և ամէն
աղօթքներէն աւելի մեծ և

զօրաւոր է. անոր համար ամ-
մէն քրիստոնեի պէտք է բե-
րան գիտնալ և լսել. և իւր
զաւակացը սորվեցընել:

Աղօթքն ինչ է:

Աղօթքն է, որ մարդ իւր սիրտը
կը նեղէ, և զինքը կորզելէ՝
փափուկ, պարարտ, և գիրցը-
նող կերակուրներէն, այն օ-
րերը՝ որ մեր եկեղեցին սահ-
մաներ է:

Ասկէց ուրիշ պաք կա՞յ մը.

Այո՛ կայ ուրիշ հարկաւոր
պաք մը, որ կըսվի Ներքին
պաք. և այս է, որ մարդըս կը

պահէ իւր սիրտը և միտքը չար մտածմունքէն. բերանը՝ հայհոյութիւն և սուտ խօսելէն. աչքը՝ գէշ նայելէն. ականջը՝ աղտապել խօսք և բամբասանք լսելէն. ձեռքը՝ չար գործելէն։

Ողորմութիւն ի՞նչ է.

Ողորմութիւնը այն է. որ կարօտեալ և խղճալի մարդոյ օգնութիւն կընեմք, և նեղութէն կազատեմք։

Ողորմութիւնը քանի՞ կերպ է.

Երկու կերպ. մէկը մարմնաւոր, և մէկը հոգևոր։

Որո՞նք են մարմնաւոր ողորմութիւնք։
Այս եօթն են. կերակրել
զքաղցեալս. արբուցանել ըզ
ծարաւեալս. զգեցուցանել
զմերկս. ժողովել զօտարս և
զղարիբս. ի տես գնալ հի-
ւանդաց. երթալ մխիթարել
զբանտարգելեալս. թաղել զան-
տէր մեռեալս։

Որո՞նք են հոգևոր ողորմութիւնք։
Այս եօթն են. բարի խոր-
հուրդ տալ երկմտեալ մարդուն.
խրատել և սովորեցնել տգէտը.
յանդիմանել և չեխնել մեղ-
քէն ետ չի դարձողը. ցաւա

կից ըլլալ և մխիթարել տր-տումը · ներել ընկերին յան-ցանքը և ոխը · համբերել նեղութե̄, և դժգոհանք չը-նել · աղօթք ընել հաւատար-կենդանե̄ց և մեռելոց համար։

## Գլ․ Գ․

Ո՞Ր օրէնքը նոր պատուիրանքը կոչուի՞ է ։

Ո՛Ն պատուիրանքը տասն է․ և մովսէս մարգարէին ձե-ռօքը տուաւ ա̄ծ 'ի սինա լե-ռը, երկու քարեղէն տախ-տակի վերայ գրած ։

Ո՞րն է առաջին պատուիրը, և

ան

ոնկեց ե՞նչ դեմէկ սորվլին :

Առաջինն է այս. Նա եմ ա̃ր ա̃ծ

քս. Թ' եղեյին գեղ ա̃ծք բօյ յէ

նեն : Նաև այս հրամանաւ մեզ

կը պատուիրէ, մի միայն Երկ-

նի և երկրի և ա̃մ եղելոց ա-

րարիչ ա̃ծը հաւատալ, և ու-

րիշը չի պաշտել :

Ո՞րն է երկրորդ պատուիրանքը. և

ոնկեց ե՞նչ դեմէկ սորվլին :

Երկրորդն այս է. Մի՛ առնու-

ցես զեղ չառաւ ըսա ա̃մ նմանութե.

Թ' երկրպագութիւն ն̃ց. և Թ' պաշ-

տեսցես զն̃ա : Նաև այս հրամանաւ

կը պատուիրէ, ոսկիէ, արծա-

թէ, քարէ, փայտէ, և կամ այլ ինչ նիւթէ կուռք չէ շինել, և անոր երկրպագութիւն չընել։ Ոսկիի ագահ մարդը, որ ոսկին ու արծաթը չափէն աւելի կը սիրէ ու կը պատուէ, կռապաշտ կը սեպուի. անոր համար պօղոս առաքեալը կը գրէ. 'Ի բաց ընկեցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն։

Մ՛էկ անհաւատը թէ որ հարցընէ, հայր ինչո՞ւ պատկերները կը շինէք, և անոր երկրպագութիւն կընէք։ Անոր ըսէ թէ, մենք պատկերքը աստուած է չենք ըսեր. քանզի

լեցի · այլ պատկերքը տեսնալով, անոր տէրը միտք կը բերենք ։ Եթէ որց պատկերք է, խոնարհութ և պատիւ կը նեմք · և այն որը մեղի բարեխօս կը բռնեմք ։ Իսկ եթէ տէրունական և ածային պատկեր է, ծնրադրութ և երկրպագութ կընեմք, և այս մեր ըրած խոնարհութիւնը և երկրպագութիւնը՝ պատկերքին տէրոջը կը վերաբերի · անոր համար ձեռագործ պաշտօղ չեմք · այլ ճշմարիտ ածապաշտ եմք ։

Ո՞րն է երրորդ պատուէրը, և ան

ինչ է՞ նչ պետի սորվինք։

Աղօթքը պատուիրած է. Մէ՛ տանուցանս շնորհան տն յս քս 'ի վերայ անօթեայց։ Նաև այս հրամանս մեզ կը պատուիրէ, այ երկրպագելի անուանը՝ դատարկ տեղն չի յիշեմք. կամ սուտ բանի համար վկայ չի բերեմք։ Ո՛ երբէ ունայն և ոչինչ խօսքի համար՝ այ ահեղ անուանը յիշելը՝ սուտ երդում ընել է։ Նաև, այն քրիստոնէ այն որ անուանով միայն քրիստոնեայ է, և մկրտութե շնորք, և քրիստոնէի գործք

չունի, այլ անունը ՚ի վր̃ սնո-
տեաց առնող է։

Ո՞րն է չորրորդ պատուիրանը, եւ
ինչպէս է՞նչ պիտի պահվին։

Չորրորդն է. Յիշեալ լեր զօրն
շաբաթուց սրբել զնա։ Նաեւ այս
պատուէրը մեզի կը սորվը-
ցընէ, վեց օր մարմնաւոր
գործ ընել, եւ մէկ օր հանգ-
չիլ, եւ այլ փառաբանութե̃ եւ
աղօթից եւ հոգեւոր գործոց
պարապիլ։

Ո՞ր շաբաթ օրը պատուիրեց հանգ-
չիլ, ինչո՞ւ այլ առաքեալները կի-
րակի օրը սահմանեցին։

Ասա

Պատճառն այս է. զերէ քո̄ տ̄րն մեր կիրակի օրը յարու̄թ առաւ, և մեզի սա̄նյին ծառայութէն ազատեց. և'ի պատիւ քո̄ի յարութե̄ը սահմանեցին ո̄ր առաքեալները՝ կիրակի օրը ծառայական գործքէ ազատ կենան :

Ո՞րն է հինգերորդ պատուէրը, և ինչպէս է՞նչ պէտք պահելն:

Հինգերորդն է. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո. զի քեզ բարի լինիցի. և երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրին բարւոյ:
Նու այս պատուէրովս մեզի կը

սոր

սովորցընէ, թէ ծնողքդ պատուէ խոնարհութ. և պատկառանքով. անոնց հարկաւոր պէտքը քո կարողութեդ չափ հոգայ, և մի՛ տրտմեցըներ. որ ած քեզի բարի ընէ, և շատ ապրիս ։

Այս պատուէրէն ալ ի՞նչ կիմացվի ։

Հայր ըսելով կիմացվի ամ երախտիք և բարութն ընողները. ինչպէս՝ թագաւորը, իշխանը, վարդապետը, վարժապետը, և անոնք ամ՝ որ հօր պէս գութ և խնամք ունին մեր վրայ, և մեր աղէկութենը

պատ

պատճառ կրկին .

Ո՞րն է վեցերորդ պատուիրանը, և անկէց ի՞նչ պէտք սորվինք :

Վեցերորդն է . Մի՛ սպանաներ :

Աս այս հրամանս կարգիլէ՝ առանց իրաւանց մարդ ըսպաննելը . ինչպէս՝ որ դատաւոր չէ, իշխանութի չունի, և մարդ կսպաննանէ . և կամ թէ իշխանութի ունի, և դատաւորէ տեղըն կսպաննանէ : Աս չընենք մարդասպանութիւն շատ անգամ յառաջ կուգայ բարկուէն . անոր համար քու տէրն մեր հրամայեաց, թէ մի՛ բար-

կա

կանայք. և ըսաւ՝ թէ ա՛մ որ
բարկանայ եղբօր իւրում տարապար
տուց, պարտաւոր լիցի գեհենոյն։
Քանի՞ կերպ է մարդասպանութիւն։
Երկու կերպ է. մէկը մարմ
նաւոր է, որ մարդուս մարմինը
և հոգին մէկ ըզմէկէ կը բա
ժանէ. և մէկալը հոգևոր է,
որ իւր հաւատակից եղբայրը
և ընկերը կատէ. ասոր համար
կըսէ յովհաննէս աւետարա
նիչը. թէ որ ատէ զեղբայր իւր՝
մարդասպան է։

Ո՞րն է եօթներորդ պատուիրանը,
և ասկէց ի՞նչ պէտք սորվինք.

Եօթ

Եօթներորդն է. Մ՛ շնար. Եւ այս հրամանս մեզի կարգիլէ ամէն չար գործքէ. որով կը խռովինք, պարկեշտ և սուրբ պահել մեր հոգին և մարմինն։

Ո՞րն է ութերորդ պատուէրը, և ինչպէս ի՞նչ պիտի պահենք։

Ութերորդն է. Մ՛ գողնար։ Եւ այս հրամանս մեզի կարգիլէ այն ամէն բանէն որ օտարին է՝ չը գողնալ, և չը յափշտակել. ոչ ծածուկ, և ոչ յայտնի։

Ուրիշ ինչ գողութիւն ալ կա՞յ. Թ.

Նաև գողութիւն կը սեպուի.

բան

բանվորին վարձքը օրէ օր ձըգել · կամ էվէլ պակաս չար գործ անել · կամ լաւ ըթըցընել, և գէշը տալ։ Նաւ գիտցիր, որ այդ մեղքերը ապաշխարանքով կը ջնջվին, այլ գըղուխն ՚ի տրն պիտի դառնայ։

Ո՞րն է իններորդ պատուիրանը, և ո՞նչպէս ի՞նչ պէտի պահէինք։

Իններորդն է · Մի՛ սուտ վկայեր ընկերէդ վրան։ Նաւ այս հըրամանս մեզի կարգիլէ այն ամմէն բանէն, որուն աղէկ տեղեակ չենք, վկայութի չի տանք։

Որքա՛ն կերպ սուտ վկայութեան կա՞յ։

Մ․յա

Այո՛ սուտ վկայ են բանբա-
սողները՝ որ ընկերին բարի
անունը կապականեն։ Սուտ
վկայ են բանսարկուի ընող-
ները, որ տարաձայնութի և
կռիւ կը ձգեն՝ տուն և ըն-
տանեաց մէջ, բարեկամի մէջ,
ընկերի մէջ, և այլն։ Սուտ
վկայ է մարդահաճոյն, այ, գո-
յէ խօսօղն. որ աչքէ չելլա-
լու համար, սուտ խօսքերուն՝
այո՛ այդպէս է կըսէ։ Դաւ-
իթ մարգարէն զայսպիսի
մարդն կանիծէ ասելով. Ան-
ցբր[illegible]եսցէ շրթունքներս [illegible]։

Սաստիկ ամմէն սուտ խօսող-
ները՝ որդի սատանայի կը կոչէ
Տէրն մեր, զերէ կըսէ. որ սուտ
խօսի, յիւրոց անտի խօսի. զի սուտ
է և հայր նր̃ սատանայ. Եւ կը
պատուիրէ, թէ եղիցի բան ձեր,
այո՛ն՝ այո՛, և ոչն՝ ոչ։

Ո՞րն է տասներորդ պատուէրը,
և ա՞նկէց ի՞նչ պէտք սորվինք։
Տասներորդն է. Մի՛ ցանկանար
տան ընկերի քո, և մի՛ անդոյ նր̃.
Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և
մի՛ ծառայից նր̃. և մի՛ ա̃մ ինչ ըն-
կերի քո իցէ։ Սա այս հրամա-
նաւս կարգիլէ Ա̃ծ մեր սիր-

 տը

որ՝ ամէն կերպ չար ցանկու-
թէն. և բաւական պիտոյ հա-
մարիմք այն, որ ինչ ա՛ծ մեզի
տուեր է, թէ տուն, և թէ այլ
ինչ ըստացուածք։ Ո՛ երբ
ցանկութիւնը՝ մեղք կը ծնանի.
և մեղքը՝ մահ և դատապար-
տութիւն կըբերէ։ Եւ որովհետև
արտաքին դուռը՝ մարդոյս աչքն
է. պէտք է որ աչքերնիս ըզ-
գուշութ̃բ պահպանեմք. որ ցան-
կութիւնը գողի նման սրտերնիս
չի մտնայ, և մեր հոգին չըս-
պանանէ։

Ո՞րն է տա՛սն օրինաց և պատուէ-

րո

բանից հաստատուածը ։

Միայն օրինաց և պատուիրանաց կատարումը սէրն է. ինչպէս պօղոս առաքեալը կը գրէ թէ՝ Լրումն օրինաց սէր է, ՚ի վե՛ր սորա, և՚ի մօտոյ քարեաց, և յանհիշեցանաւոր հաստատոց։

Ատող ո՛չ դէտէ սիրեմք։

Նախ և առաջ պարտաւոր եմք զա՛ծ սիրել. որ մեզի ստեղծեր է, և կը խնամէ։ Ահա հայր ա՛ծ զորդին միածին աշխարհք խրկեց մեզի փըրկելու համար։ Որդին միածին եկաւ, մարմին առաւ,

մե

մեզի փրկեց ։ Հոգին մը իւր շնորքը մեզ կուտայ, որ ճշմարտութիւնը ճանաչեմք, և բարին կամենամք։

Աշակերտ՝ ո՞վ պէտք սիրեմք։

Երկրորդ մեր անձը պիտի սիրեմք · մեղքէն հեռի պահեմք · բարի գործեմք · որ ամէայնին ողորմութէը և արքայութէը հասնիմք։

Աշակերտ՝ ո՞վ պէտք սիրեմք։

Երրորդ՝ մեր ընկերը պիտի սիրեմք՝ մեր անձին նման · զերկ մէկ աւազանէ ծնեալ եղբայր եմք՝ մէկ հաւատք, մէկ մկրտութի

ու

ունիմք. և մէկ արքայութիւն պէ-
տի երթամք: Եւ ո՞ր առա-
քեալը կըսէ թէ, ո՛վ որ իւր
եղբայրը կատէ, մարդասպան է:

## Գլ. Ս:

ՍԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ Ի՞ՆՉ Է:
Եկեղեցւոյ խորհուրդը՝ այն ան-
տեսանելի շնորհացը արտաքին
և զգալի նշան մի է, որ անով
աստուածային շնորքը մեզի կը տրվի:

Քանի՞ է:

Եօթն է, այսինքն՝ մկրտութիւն,
դրոշմ, հաղորդութիւն, ապաշ-
խարութիւն, վերջին օծում,
կարգ, պսակ:

Մէ

## Մկրտութին ի՞նչ է

Մկրտութին՝ վերստին և հո_
գևոր ծնունդ մի է․ որ ս̃բ
աւազանին մէջը մեր մարմինը
կը լուացվի ջրով յանուն հօր,
և որդւոյ, և հոգւոյն ս̃բյ․ և
մեր հոգին կը մաքրի յադա_
մայ սկզբնական մեղքէն։

## Դրոշմ ի՞նչ է։

Դրոշմն է օծումն սրբալոյս
մեռոնին, որ օծեալ և կնքել
կըլլայ մկրտեալն․ և այս ան_
ջնջելի նշանովը ք̃ի զօրապե-
տին յատուկ զինուոր կը լինի։

Քանի՞ տեղ օծում կըլլայ Դըլէ

փետուր տղայէն:

Ինը տեղ, այսինքն, ճակատը, աչքը, ականջը, հոտոտելիքը, բերանը, ափը, սիրտը, քամակը, ոտքը:

Այս օծումը կամ կնիքը՝ ի՞նչ զօրութիւն ունին:

Ճակատին կնիքը՝ համարձակութիւն կու տայ քնի իր հաւատքը աներկիւղ դաւանելու:

Աչքերին կնիքը՝ հոգւոյ աչքը կը լուսաւորէ, որ միշտ արթուն և պատրաստ մնայ:

Ականջաց կնիքը՝ հոգւոյ ականջը կը բանայ, որ ածայինն

պատուիրանքը լսէ։ Հոտոտե-
լեաց կնիկը՝ յաւիտենական
կենաց անմահական հոտոյն
հոգւին կը զմայլեցընէ։ Բերա-
նին կնիկը՝ պահապան կըլլայ
բերնին, որ չար չի խօսի։
Աջին կնիկը՝ զօրութի և ոյժ
կուտայ ձեռքին, որ բարի
գործէ։ Սրտին կնիկը՝ հո-
գին կը սրբէ, կը նորոգէ,
և կը հաստատէ, որ միշտ բա-
րի խորհի։ Կռնակին կնիկը
վահան, այսինքն՝ խալխան կըլ-
լայ կռնակը, որ սատանին նետը
չի խոցէ։ Ոտից կնիկը՝ ստու-

քէ

քերը կուղղէ , որ արքայութեան ճանապարհը երթայ։ Վասն այս կնիքներըս մէյմէկ ահաւորդէն կրկին միրոնեալ տղայքն , որ անոնցմով կը պատերազմի սա սատանայի՝ և մարմնոյ՝ և աշխարհի դէմ , և կը յաղթէ ․ և քն̄ թագաւորէն անթառամ պըսակ կառնու։

Հաղորդութիւն ի՞նչ է։

Հաղորդութիւն՝ քն̄ի ա̄յ մարմնոյ և արեան խորհուրդն է , որ արտաքին տեսութ̄ հաց և գինի կերևնայ , այլ իսկապէս քն̄ ․ է և մէջ անոր ճաշակմամբ՝ կեանք

կեանք և կենդանութի̃ կըստա
նանք։ Նաև, քանի սերը մըտ
քերնիս կը բերենք և կը յի
շենք, թէ մեզի այնքան սի‿
րեց, մինչև որ իւր մարմինը
և արիւնը մեզի հոգևոր կե‿
րակուր և ըմպելի տուաւ.
որով մեր հոգին կենդանի
կըլլայ։

Այս կը հաստատեմ, թէ սրբագոր‿
ծեալ նշխարքն իսկապէս Ք̃ն է.
Բայց շատ կ'ուզեմ սորվիլ թէ՝ երբ
որ քահանայն մէջ նշխարքը մաս
մաս կը բաժանէ, ի՞նչպէս ամբողջ
կը մնայ մէջ Ք̃ն այն բաժանեալ մա
սանց

տանց գիտէ․ ապսպէ նը իընդրեմ
ինչ գին օրինակն ի պոլ, որ իսկըս
հասնի․

Բերցի օրինակ ահա արե-
գակը, որ մէկ հատ է աշխար-
քիս մէջ, և մէկ կերևնայ ամ-
բողջ հայելիքին մէջը․ և եթէ
կոտր կոտր ընես այն հայելին,
մի և նոյն արեգակն է, որ կե-
րևնայ ամմէն մէկ կոտր հա-
յելիքին մէջը, և իւր ամբող-
ջութիւնը չի կորսնցներ։ այսպէս
մէկ քո՛ է ամբողջ նշխարքին
մէջ, և բեկեալ մասանց մէջ։

Աշակերտութին ինչ է։

Աշակ

Ապաշխարութն է, իւր գոր–
ծեալ մեղքը լալ, և կամաւոր
պատիժ կրել։

Քանի՞ բան պէտք է ապաշխա–
րութե։

Չորս բան. առաջինն է՝ զղջ–
ջումն գործեալ մեղքին։ Երկ
րորդն է՝ առաջադրութի կրկ–
կին անգամ չի գործելոյ։
Երրորդն է՝ Ճշմարիտ խոստո
վանութի առաջի քահանային։
Չորրորդն է՝ կատարեալ զՃա
րումն դրած ապաշխարանքին։
Իսկ այս մը խորհուրդը՝ քա–
հանային արձակում տալովը կը
ջըն

Ջընջէ բոլոր ներգործական մեղքերը, եթէ մահուցուն. և եթէ ներելին.

Մերջէն օծում ի՞նչ է.

Մերջին օծումը՝ հոգւոյ և մարմնոյ առողջարար դեղ մն է, որ քահանայական աղօթքին զօրութեամբ ծանր հիւանդները կը բժշկէ, և անոնց ներելի մեղքը կը քաւէ։

Հայոց մէջ ինչու չէին վերջին օծման խորհուրդը կը կատարուէ՞։

Այո՛ ծանր հիւանդներուն վրայ քանի անգամ հարկաւորընէ՝ կը կատարէ. և այս մեր

խոր

խորհուրդն է՝ որ կրակի մէ_
ջէն ծնաւ․ ուր քահանայքն կը
կարդան սաղմոս, գիրք, բժըշ_
կուն աւետարան, աղօթք․ և
յետոյ փարատեմ զցաւս կը
սեն ։

Մէ՛ թէ օրհնելու խաչով հի_
ւանդը օծել հարկաւո՞ր է։

Իւղով օծել՝ ազգայինն ծէս, և խորհրդական արարողութի մի է, և հաւատոյ մաս չէ, անոր համար իւղոյ գործա_ծութին հարկաւոր չէ․ զերե սաանկ ծիսական արարողու_թիւններ ամէն քրիստոնեայ

ազ

ազգի մէջ՝ կըլլայ որ կը փո_
փոխուի , և կըլլայ որ կը խա
փանի ։ Իսկ բուն զօրութիւնը
այս խորհրդոյս է քահանա_
յական աղօթքը և ընթերց_
ուածքը ․ և այն է հաւատոյ
մասը և հարկաւորը , և այս
ամենևին չի խափանիր ․ ինչպէս
կը գրէ մեծն խոսրով ժամա
գրքի մեկնութեան մէջը , 281 ե_
րեսը ։ Ասոր կըսէ յակոբոս
առաքեալն , թէ աղօթքն հա_
ւատոյն փրկեսցէ զաշխատեալն ։

Քահանայութեան կարգն ինչ է ։

Քահանայութեան կարգը հո_
գևոր

գեւոր իշխանութի մի է, որ ՚ի հոգւոյն սբյ կառնու ձեռնադրեալն. և իշխանուի կարենայ պատարագ մատուցանել, անդարձ մեղաւորը կապել, և զղջացող մեղաւորին արձակում և թողուի տալ։

## Պսակն ի՞նչ է

Պսակն՝ եկեղեցւոյ սբ խորհուրդ մի է, որ այրը և կինը սբ սիրով և հաւատարմութբ կը կապակցէ միմեանց հետ. որ զաւակ ծնանին, և քնի եկեղեցին աճեցուցանեն։

***

## Գլ. Ը։

### Բարոյական առաքինութիւնք քանի՞ են։

Չորս են. այսինքն՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն, և բարեխառնութիւն։

### Խոհեմութիւնն ի՞նչ է։

Խոհեմութիւնն է, որ անով չարը բարիէն կը ճանաչեմք, և մէկ զմէկէ կը զատեմք. և ամմէն ընելու բաներնիս՝ ըստ արժանւոյն կը տնօրինենք։

### Արիութիւնն ի՞նչ է։

Արիութիւնն է, որ անով ամմէն դժուարութեան, և աշխարհի փորձութեան համբերութիւն կը

յաղթեմք՝ ոչ յաջողուե̃ ժա
մանակը կը հպարտանամք, և
ոչ ձախորդութե̃ ժամանակը
կը տրտմիմք։

## Արդարութի̃ն ի՞նչ է։

Արդարութի̃ն է, որ անով ամ
մէն մարդոյ արժանի և վա‿
յելուչ եղածը կընեմք. թէ
պատուել պէտք է՝ կը պատ‿
ուեմք, թէ վախնալ արժան
է՝ կը վախնամք, թէ ողորմե
լու կարօտ է՝ ողորմութի̃ կու‿
տամք։ Եւ այս արդարութի̃
է, որ մեզնէ մեծերն պատիւ
ընեմք, մեզ հաւասարին հետ
սի

սիրով կենցաղավարիմք . մեզնէ
պզտորկին խնամք և գթութի
ընեմք ։

### Բարեխառնութին ի՞նչ է ։

Բարեխառնութինը՝ ամմէն ան_
կարգ ցանկութե սանձ և խե_
լարն է . որ անով չար ցանկու_
թինք կը խափանին ։

### Այս ըսած առաքինութիւներըդ ու՛
### դէն ուղէի և ուրկէն մարդու հո_
### սարան է . քրիստոնէի յառաջ եկած
### առաքինութի ու կո՞յ մ ։

Այ՞ կայ , որ քս̄ մեր տ̄րը
ենքն ըլլայ , և մեզ սորվը_
ցուց . և է այս չորսը . խո_
նար

նարհութի, սէր, համբերութի, և ներողութի։

---

Գլ. ԻԴ։

Զ Քանի՞ առաքինութիւն կայ, որ ա-
նոնք գործելով երանութեան արժանի
կըլլայ մարդս յայս աշխարհիս մէջ,
և վերջապէս երանութեան կը գտնայ
արքայութեան մէջ։

Ութը կերպ առաքինութի
կայ, որ կըսուին ութ երանութիւնք։

Ո՞րն է առաջին երանութիւնն։

Առաջինն է, հոգւով աղքատ
ըլլալ. ք՝ մարդս իր ունե-
ցած մարմնաւոր ստացուածքը
քանի տեղ չի սեպել. և ա-
նով

նալ չի հպարտանալ · և չու-
նենալուն համար չի տրտմիլ:

Ի՞նչ է երկրորդ երանութիւնը:

Երկրորդն է, հեզ ըլլալ · զի՝
եթէ մէկը իւրեան թշնամու-
թի ընէ, անոր դէմ չի բար-
կանալ, քէն չի պահել · և
թշնամուն չընել · այլ փոխա
րէնը բարի ընել:

Ի՞նչ է երրորդ երանութիւնը:

Երրորդն է, սգաւոր ըլլալ,
զի՝ իւր մեղքը լալ և սգալ ·
և այսպէս լալով իւր կորու-
սեալ հոգին գտնալ:

Ի՞նչ է չորրորդ երանութիւնը:

Չորրորդն է, քաղցեալ եւ ծա-
րաւի ըլլալ արդարութե. զի՝
ինչպս անօթի մարդը հացին,
եւ ծարաւ մարդը ջրոյն կը
փափաքի. այնպէս փափաքիլ
արդարութե:

Ի՞նչ է հինգերորդ երանութիւնը:

Հինգերորդն է՝ ողորմած ըլ-
լալ. զի՝ թէ հոգւոր եւ թէ
մարմնաւոր ողորմութբ՝ կարօ-
տեալ եւ խղճալի մարդոյն ո-
ղորմիլ:

Ի՞նչ է վեցերորդ երանութիւնը:

Վեցերորդն է, սիրտ մը ու-
նենալ. զի՝ սիրտը մաքուր հա-
յե

յեղէն պէս պահել, որ զԱծ-
տեսնալու արժանի ըլլայ:

Ի՞նչ է եօթներորդ երանութիւնը:

Յօթներորդն է, խաղաղարար ըլլալ. ք՛ մէկ ըզմէկու մէջ եղեալ թշնամութիւնը և ատելութիւնը վերցունելու ջանք ընել, և խաղաղութիւն հաստատել. և այսպիսի մարդն՝ որդի այ կը կոչվի. զերէ նման կըլլայ որդւոյն այ, որ մեր և այ մէջ եղեալ թշնամութիւնը՝ իւր խաչելութեն վերցուց, և խաղաղութի ըրաւ: Ուստի ով որ խռովութի կը սերմանէ՝

որ

որդի սղնյի է․ և քնի խաղք
և մահը անպտուղ կընէ։
Ի՞նչ է ութերորդ երանութիւնը։
Ութերորդն է, արդարութեն
համար հալածուած կրել․ ք͞ս
ամէն կերպ նեղութեն համբե-
րել, թէ հալածոյ, թէ ճըշ-
մարտութեն համար․ ապա ք͞ս
ո͞րը՝ ճշմարտութեն համար ող
խաղք եկաւ արիւն թափեց․
ինչպէս իւր ո͞ր բերանովը կը
վկայէ, թէ յոյն խոյ ենէալեմ,
չէ վէնոյեցեց ճշմարտու-թէ։

## Գլ. Բ.

Մեղացն քանի՞ կերպ է:

Երկու կերպ է. սկզբնական և ներգործական:

Ո՞րն է սկզբնականն:

Սկզբնական մեղքն է, որ ա-
դամ նախահայրէն սերեալ ունիմք ամէնքս: Եւ այս կը ջնջըվի սուրբ մկրտութեամբ:

Ո՞րն է ներգործականն:

Ներգործական մեղքն է, որ յետոյ մեր կամօքը չար կը գործեմք: Եւ այս կը ջնջըվի զղջմամբ, խոստովանութեամբ, և ապաշխարութեամբ:

Ներ

Ներգործականն քանի՞ կերպ է։
Երկու. ներելի և մահացու։

Ներելի մեղքն ի՞նչ է։

Ներելին է այն՝ որ ըստ ին-
քեան թեթև մեղք է. կամ
որ տկարութ̅ե կամ չգիտութ̅ե
չար կը գործեմք և ա̅յ սէրը
սրտերնուս մէջը ունիմք։

Մահացու մեղքն ի՞նչ է։

Մահացուն այն է՝ որ ը̅ս ին-
քեան մեծ մեղք է, կամ որ
յօժար կամօք և գիտութ̅ե
չար կը գործեմք, և ա̅յ սէրը
սրտէ կը հանեմք։

Գլխաւոր մահացու մեղքը քանի՞ են։

Եօթն են. այն՝ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, և բղջախոհութիւն։

Ո՞րն է մեղք զանցառութեան, և ո՞րն է մեղք առնելութեան։

Այս գիտցի՛ր, որ Աստուծոյ պատուիրանաց ոմն յանձնառական է, որ կը պատուիրէ թէ ըրէ, ինչպէս՝ պատուէ՛ հայրը քո և մայրը։ և ոմն հրաժարական է, որ կարգիլէ թէ մի՛ ըներ. ինչպէս՝ մի՛ սպաններ, մի՛ գողնար. ահա եթէ յանձնառականը զանց առնեմք չի կատարեմք,

կը

կրօղլի Թղք շանցանաւէ: Եւ եթէ
թէ հրամայականէն հեռի չի
կենամք եւ այս հրամաններին դէմ
գործեմք, կրօղլի Թղք տանե_
լութեան:

Բանի՞ հարկաւոր բան կայ մեր
քերնիս պահելու, որ Թղքէ հե_
ռի հնամք:

Այս չորս բանն է. մահն.
դատաստանն. դժոխքն. եւ ար
քայութիւնն:

ԱՒԱՐՏ:

Գիրքը [illegible] է
ու [illegible] [illegible] 5/VI-42